

# ՎԱՅՈՑ ՁՈՐ

Հնամենի մշակույթ, հրաշալի բնություն, արևահամ բարիքներ

## 1. *Ընդհանուր տեղեկություններ*

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի հարավ-արելքում: Այն տարածքով Հայաստանի ամենափոքր մարզն է՝ 2308 քառ կմ, բնակչության թիվը՝ 55800 (2009թ. հունվարի 1), որից 19300-ը՝ քաղաքային բնակչություն, 36500-ը՝ գյուղական:

Հարավից սահմանակից է Սյունիքի մարզին և Նախիջևանին, արևմուտքից՝ Արարատի մարզին, հյուսիսից՝ Գեղարքունիքի մարզին, արևելքից՝ Արցախին:

Վայոց ձորը ձորերի ու կիրճերի, առուների ու գետերի, բարձր լեռների ու խորհրդավոր քարանձավների երկիր է:

Բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 850 մ-ից (Արենի) մինչև 3500 մ (Գոգի լեռ):

Այն իրենից ներկայացնում է բոլոր կողմերից լեռներով շրջապատված թասաձև մի գոգավորություն՝ բարդ ու խիստ մասնատված մակերևույթով: Ընդհանրապես Վայոց ձորին բնորոշ է լանդշաֆտի բազմազանությունը և ռելիեֆի գոտիականությունն ու կտրտվածությունը, որն էլ պայմանավորում է բուսական և կենդանական տեսակների բազմազանությունը:

Մարզի ամբողջ տարածքով ձգվում են երկու խոշոր լեռնաշղթաները՝ Վայքի լեռնաշղթան՝ հարավից, և Վարդենիսի լեռնաշղթան՝ հյուսիսից: Գոգավորության կենտրոնական մասում աչքի է ընկնում Վայոց սարը կամ Գիժ սարը, որը հանգած հրաբուխ է՝ 2 հրաբխային խառնարաններով: Նշանավոր լեռնագագաթներից են Գեղասարը, Վարդենիսը, Մուլեմասարը, Գոգի լեռը, Հարսնասարը: Դրանք զարդարում են Վայոց ձորի շատ բնակավայրերի բնապատկերները:

Վայոց ձորն ունի 44 համայնքներ՝ 3-ը քաղաքային, և 41-ը՝ գյուղական:

## *Եղեգնաձոր*

Եղեգնաձոր քաղաքը Վայոց ձորի մարզի վարչատնտեսական կենտրոնն է: Այստեղ են գտնվում մարզպետարանը, քաղաքապետարանը: Մարզի ամենամեծ բնակավայրն է. բնակչության թիվը՝ 8200 (2009թ): Քաղաքի հեռավորությունը Երևանից 122 կիլոմետր է: Եղեգնաձորով է անցնում Հայաստան-Արցախ, Հայաստան-Իրան միջպետական մայրուղին: Քաղաքի հարավից հոսում է Արփա գետը, իսկ նրա միջով՝ Սրկղոնք գետակը: Հյուսիսում քաղաքն աստիճանաբար ձուլվում է Գլաձոր ու Վերնաշեն գյուղերի հետ:

Եղեգնաձորը պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից է: Այն եղել է տարբեր հայ իշխանական տների աթոռանիստը:

Եղեգնաձորը հայտնի է իր գինիներով, պանիրներով, մրգային պահածոներով:  
Ներկայումս

Եղեգնաձորը օրեցօր գեղեցկանում է՝ ժամանակակից շինություններով, այգիներով ու պուրակներով: Քաղաքի շրջակայքում պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդները, Սուրբ Աստվածածին եկեղեցին: Նրա շրջակայքում են գտնվում Գլաձորի եկեղեցին (համալսարանը), Արկազի Սբ Խաչ, Սպիտակավոր եկեղեցիները, բազմաթիվ բնական հուշարձաններ:

Այստեղ գործում են երկրագիտական թանգարան, Հայաստանի պետական պատկերասրահի մասնաճյուղ:

Եղեգնաձորն ապրում է ակտիվ մշակութային կյանքով. վերանորոգված մշակույթի տանը կազմակերպվում են դասական, ազգային և ժամանակակից երաժշտության համերգներ ու փառատոններ: Հայտնի ավանդական միջոցառումն է՝ Աշնանային բերքի տոնը՝ որին մասնակցում են բազմաթիվ հայաստանցի և օտարերկրացի զբոսաշրջիկներ:

## **2. Կլիման**

Վայոց ձորի կլիման աչքի է ընկնում չորությամբ ու ցամաքայնությամբ: Կլիմայի առանձնահատկությունը արևոտությունն է. տարվա 365 օրերից միայն 30-40 օրն է անարև: Իսկ արևափայլքի տևողությունն այստեղ ամենաերկարն է Հայստանում: Տեղումների միջին տարեկան քանակը 390-780 մմ: Միջին ջերմաստիճանը ամռան ամենատաք ամիսներին՝ +15-ից + 26 (կախված բարձրություններից), իսկ ձմռան ամենացուրտ ամիսներին՝ -3-ից մինչև -8 աստիճան ըստ ցելսիուսի: Օդի հարաբերական խոնավությունն առավելագույնը դիտվում է հունվարին՝ 67-75%, իսկ նվազագույնը՝ օգոստոսին՝ 39-62%: Ձյունածածկույթի բարձրությունը նախալեռներում լինում է 10-76 սմ, իսկ բարձր լեռներում՝ մինչև 2 մ:

## **3. Բնություն և բնական ռեսուրսներ**

Մարզի ընդերքը հարուստ է հանքային ջրերի, ապակու հումքի /կվարցային ավազ/, ներկերի պիգմենտներ, ոսկու, կապարի, կրաքարի, կավի, ավազի, բազալտի, գրանիտի, մարմարի, ֆելզիտի պաշարներով: Վայոց ձորին մեծ հռչակ է բերել հատկապես Մարտիրոսի ֆելզիտը: Այս քարատեսակը յուրահատուկ է դեղին, կապույտ, կանաչ երանգների վրա երևացող զարմանահրաշ պատկերներով:

- **Բուսական աշխարհ**

Վայոց ձորը առանձնահատուկ է բուսական աշխարհի բացառիկ բազմազանությամբ: Ընդամենը 2.3 հազար քառ կմ տարածքի վրա աճում են 1650 տեսակ բարձրակարգ բույսեր՝ Հայաստանում եղած բույսերի տեսակների կեսը: Առկա են ցածրակարգ սպորավոր բույսեր: Տեղական բուսատեսակների մեջ մեծ թիվ են կազմում դեղաբույսերը: Մեծ տեսակային բազմազանությունը պայմանավորված է ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլև բարդ երկրաբանական կառուցվածքով: Բուսատեսակների մյուս տիպերը ընդգրկում են չորասեր (քսերոֆիլ), տափաստանային, անտառային, ալպիական և ջրային տեսակներ:

Շատ արժեքավոր են Վայքի գիհուտները: Ընդհանրապես մարզն աղքատ է անտառներով (տարածքի 1.6%-ը, ընդամենը 3700 հա): Մակայն դրանք կազմող 155 տեսակի ծառերի ու թփերի մեծամասնությունը էնդեմիկ և հազվագյուտ տեսակներ են: Վայոց ձորի բույսերի շատ արժեքավոր տեսակներ գրանցված են Կարմիր գրքում և խիստ պահպանության կարիք ունեն:

- **Կենդանական աշխարհ**

Բնական պայմանների բազմազանությունը պայմանավորել է նաև հարուստ կենդանական աշխարհի առկայությունը: Հայաստանում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը բնակվում են այստեղ: Դրանցից շատերը գրանցված են Կարմիր գրքում, իսկ շատերն էլ հանդիպում են միայն այստեղ: Բեզոարյան այծ, Հայկական վայրի ոչխար կամ մուֆլոն, քարակաքավ, լոր, վայրի հնդկահավ, ճնճղուկազգիների շատ տեսակներ, գիշատիչ թռչուններից արծիվներ ու անգղեր, ձկների հազվագյուտ տեսակներ՝ կարմրախայտ, բեղլու, կողակ, հազվագյուտ օձեր ու մողեսներ, վայրի խոզ, գորշ արջ, աղվես, գայլ, նապաստակ, հովազ, լուսան ... Մա Վայոց ձորի <<փոքր բնակիչների>> ոչ լրիվ ցանկն է: Կենդանիների գոյության համար Վայոց ձորում պայմանները համեմատաբար բարենպաստ են, քանի որ այստեղ բացակայում են մթնոլորտն աղտոտող արդյունաբերական եռնարկություններ: Այդ հանգամանքով է պայմանավորված նաև այս տարածքում օդի, ջրերի և սնունդի էկոլոգիական մաքրության բարձր աստիճանը:

- **Գետեր և լճեր**

Վայոց ձորի տարածքը մասնատված է բազմաթիվ գետերով, գետակներով և հովիտներով, որոնք այստեղի բնաշխարհը դարձնում են անկրկնելի գեղեցիկ ու բազմազան: Հիմնական ջրային զարկերակն Արփա գետն է, որը մարզի տարածքում ունի 92 կմ երկարություն և 2080 քառ.մ ջրահավաք ավազան: Արփան Հայաստանի ջրառատ և արագահոս գետերից մեկն է: Այն սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակի հյուսիս արևմուտքից՝ 3200 մ բարձրությունից, և թափվում Արաքս գետը՝ Նախիջևանի և Թուրքիայի սահմանի վրա: Արփա գետն ունի բազմաթիվ վտակներ, որոնք տեղ–տեղ առաջացնում են սքանչելի ջրվեժներ՝ Ջերմուկ, Հերիեր:

Ամենամեծ վտակը Եղեգիսն է: Եղեգիսի ձորակը յուրահատուկ է իր ինքնատիպ բնապատկերներով, բուսական և կենդանական աշխարհով: Այն հանդիսանում է Վայոց ձորի 4 հատուկ պահպանվող տարածքներից մեկը:

Արփայի ջրերի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով կառուցվել է 48.3 կմ երկարություն ունեցող Արփա-Սևան ջրատար թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից: Արփա գետի ավազանը հարուստ է նաև բազմաթիվ սառնորակ աղբյուրներով, որոնց շրջակայքը հանգստի հանգրվան կարող է դառնալ էկո և արկածային տուրիստների համար:

Շատ գեղեցիկ է նաև Հերիերի ջրամբարը՝ շրջապատված լեռներով, որոնց վրա փոված են գիհու նոսրանտառներ: Վայոց ձորի տարածքում կան ևս 20-30 փոքր բնական լճակներ, որոնցից մի քանիսն իրենց յուրահատուկ դիրքով և գեղեցկությամբ համարվում են բնության հուշարձաններ:

Երևանից Արցախ և Իրան տանող մայուղու մի զգալի հատվածն անցնում է Արփայի կիրճով: Արփայի մոտակայքում են գտնվում Արենիի եկեղեցին, Մոզ քաղաքի ավերակները, Գնդեվանքը, Ագարակաձորի կամուրջը, բազմաթիվ քարանձավներ և բնության այլ հուշարձաններ:

#### ***4. Պատմական հուշարձանները / պատմամշակութային տուրիզմ/***

Պատմական Վայոց ձորը եղել է Հայստանի հոգևոր -մշակութային կարևոր կենտրոն: Այդ են վկայում 1000-ից ավել հույակերտ պատմական հուշարձանները, որոնք ցրված են մարզի ամբողջ տարածքով՝ բերդեր և ամրոցներ, եկեղեցիներ և վանական համալիրներ, մահարձաններ ու խաչքարեր, քարավանատներ և կամուրջներ, ձիթհանքեր և ջրաղացներ...

##### ***• Եկեղեցիներ և վանական համալիրներ***

Եկեղեցիների ու վանական համալիրների առատությունը Վայոց ձորը դարձնում են իսկական հոգևոր-մշակութային տարածք: Այստեղ առավելապես հայտնի են Նորավանքը, Գնդեվանքը, Շատիվանքը, Խաչիկի Քարկոփ վանքը, Չորաց վանքը, Արատեար, Յախացքարը, Հերիերի Սբ. Միոն մենաստանը, Արենիի Սբ. Աստվածածինը, Մարտիրոսի վիմափոր եկեղեցին, Գոմքի խաչքար-մատուռը, իսկ բազմաթիվ ասեղնագործ խաչքարերը՝ ցրված դրանց շուրջը, իրենց նուրբ գեղեցկությամբ լրացնում են վանքերի հանդիսավոր տեսքը: Տպավորիչ են Գնիշիկի, Հերիերի, Գոմքի խաչքարերի խմբերը իրենց առատությամբ, Նորավանքի և Գլաձորի խաչքարերը հիացնում են իրենց նրբությամբ, իսկ Յախացքարի խաչքարերը՝ իրենց մեծությամբ և քանդակների առատությամբ ...

13-14-րդ դարերում մեծ հռչակ է ստացել Գլաձորի համալսարանը, որը դարձել է գիտության ու լուսավորության այդ ժամանակների համահայկական կենտրոնը:

Վայոց ձորի պատմական հուշարձանները կառուցվել են առավելապես 8-14-րդ դարերում: Հայտնի ճարտարապետներն են Մումիկը, որը նաև քանդակագործ էր, գրող ու մանրանկարիչ, Սիրանեսը, Մխիթարը, Շնորհավորը, Գրիգորիկը: 2010թ-ին լրանում է Մումիկի ծննդյան 750-ամյակը:

Յուրաքանչյուր հուշարձան ունի իր ինքնատիպությունն ու հմայքը: Սակայն դրանց թագն ու գլուխգործոցը Նորավանքն է (ճարտարապետ Մումիկ, 1339թ.), որը հրաշալի ու յուրահատուկ մի վանական համալիր է՝ շրջապատված կարմիր ժայռերով:

Ի տարբերություն այլ երկրների՝ Հայաստանում եկեղեցիներն ու վանքերը կառուցված են բնակության վայրերից հեռու, այնտեղ, ուր բնությունը սքանչելի է, իսկ երբեմն էլ՝ անմատչելի: Վայոց ձորում ևս պատմության և բնության հուշարձանները փոխկապակցված են խորհրդավոր, ներդաշնակ ու կատարյալ ամբողջության մեջ:

- ***Հոգևոր տուրիզմ***

Վանքերն ու եկեղեցիները միշտ էլ սպասում են այցելուների, որոնք անպայման հոգևոր հանգստություն ու դրական լիցքեր են ստանում այդ սրբավայրերում: Սակայն ուխտագնացությունները դեպի պատմական հուշարձաններ արդեն դարձել են ավանդական և ունեն իրենց ժամանակացույցը՝ ապրիլին՝ Նորավանք, հունիսին՝ Սպիտակավոր, սեպտեմբերին՝ Արկազի Սբ. Խաչ:

Վայոց ձորի գործող եկեղեցիներում Հայ առաքելական եկեղեցու կողմից ընդունված արարողակարգով նշվում են բոլոր հոգևոր տոները, կատարվում են ծիսակարգեր, մատուցվում

- ***Բերդեր և ամրոցներ***

Վայոց ձորի համար կարևոր պաշտպանական նշանակություն են ունեցել բերդ-ամրոցները: Դրանցից նշանավորներն են Սմբատաբերդը, Հրաշկաբերդը, Պռոշաբերդը, Սուլեմաբերդը, Վայսի բերդը: Դրանցից լավագույնն է պահպանվել Սմբատաբերդը: Որոշ բերդեր ու ամրոցներ, ինչպես Ազատեկի ամրոցը կամ Խաչիկի Բերդաքարը, թվագրվում են ք.ա. 1-ին հազարամյակին, իսկ դրանցից շատերն էլ կառուցված են Պռոշյան և Օրբելյան իշխանների օրոք:

Բերդերն ու ամրոցները Վայոց ձորի բուռն ու հերոսական պատմության իսկական վկաներն են:

## ***Կամուրջներ և քարավանատներ***

Պատմական մեծ արժեք և հետաքրքրություն են ներկայացնում Վայոց ձորի կամուրջները և քարավանատները (միջնադարյան հյուրանոցներ): Կամուրջների այստեղ կարելի է հանդիպել բավականին հաճախ: Դրանցից նշանավորն Ագարակաձորի կամուրջն է (13-րդ դար), որը մինչև վերջերս օգտագործվում էր, իսկ քարավանատներից լավագույնս պահպանվել է Օրբեյանների իջևանատունը (Մելիմի քարավանատուն) 14-րդ դար, որը գտնվում է ներկայիս Եղեգնաձոր-Մարտունի մայրուղու վրա: Կամուրջներն ու քարավանատները վկայում են, որ Վայոց ձորը միջնադարում ակտիվ առևտրական ուղի է եղել:

- ***Հրեական գերեզմանոց***

Վերջին տարիներին Վայոց ձորի Եղեգիս գյուղում, Եղեգիս գետակի ափին հայտնաբերվեց մի գերեզմանոց, որի տապանքարերը նման չէին որևէ ժամանակի հայկական գերեզմանոցի տապանաքարերի: Հնագետների նախնական հետազոտություններից պարզվեց, որ դա 12-13-րդ դարերի հրեական գերեզմանոց է՝ տապանաքարերին եբրայերեն արձանագրություններով: Մինչ հայ և հրեա գիտնականները համատեղ ուսումնասիրություններ են կատարում՝ պարզելու, թե ինչպես է հրեական համայնքը 12-րդ դարում հայտնվել այստեղ, գերեզմանոցն արդեն ունի բազմաթիվ այցելուներ: Իսկ մայիսի 11-ն էլ որոշվել է որպես հրեական գերեզմանոցի ուխտագնացության օր:

## ***5. Բնական հուշարձաններ***

Վայոց ձորը հարուստ է ոչ միայն ձեռակերտ, այլև անձեռակերտ՝ բնական հուշարձաններով: Դրանցից են կարստային հսկա քարանձավները, Նորավանքի կիրճը, Բախտի կամար ժայռը Ջերմուկի կիրճում, Սպարապետ Վարդանի կիսանդրին և Սատանայի աշտարակը Արփայի կիրճում, Ջերմուկի, Հերհերի ջրվեժները, Հայելի, Սրբալի, Մարտիրոս, Բարձրունի լեռնային փոքրիկ լճակները, բազմաթիվ հանքային աղբյուրները:

- ***Քարանձավներ***

Կարստային քարանձավները Վայոց ձորում հայտնաբերվել են պատահականորեն՝ շինարարական աշխատանքների ընթացքում՝ 80-ական թվականներին: Դրանք ձևավորվել են միլիոնավոր տարիների ընթացքում՝ ջրի և ապարների փոխներգործությամբ: Երեք խոշոր քարանձավները՝ Մագիլի, Մոզրովի և Արջերի, գտնվում են Արենի, Խաչիկ, Գնիշիկ և Ագարակաձոր գյուղերի միջև ընկած հատվածում: Հատկապես տպավորիչ է <<Արջերի քարանձավը>>, որը ոչ միայն ամենաերկարն է, այլև ամենահարուստը ջրաքարային առաջացումներով, որոնք զարդարում են քարանձավի սրահները, միջանցքներն ու խոռոչները՝ տարբեր ձևի, չափի ու գույնի վարագույրներով, աշտարակներով, շիթերով, գազանակերպ ու մարդակերպ քանդակներով: Այս ամենը հեքիաթային տեսք են տալիս քարանձավին: Այն ավարտվում է մի փոքրիկ լճակով, որի ջրերը պարզ են ու վճիտ:

Եվ ահա 2008թ-ին միջազգային հնագիտական արշավախումբը Վայոց ձորում կատարել է նոր հայտնագործություն: Արենի-1 կամ Թոչունների քարայրում հայտնաբերվել է 5500 տարվա հնության կաշվե կոշիկ՝ տրեխ: Փաստորեն այս կոշիկն ավելի հին է, քան Սթունհենջը և եգիպտական բուրգերը: Այն ամենահին կոշիկի նմուշն է, որ երբևէ գտնվել է ամբողջ աշխարհում: Հայտնաբերված 5500-ամյա կոշիկն այժմ գտնվում է ՀՀ պատմության թանգարանում:

Շատ արժեքավոր են նաև նույն այդ քարանձավում գտնված մի շարք օրգանական ծագման նյութերը՝ տեքստիլ գործվածքներ, չորացած սալորներ, նուշի կորիզ, ճոպաններ, փայտե սյուներ, մարդու գանգի և ուղեղի մնացորդներ: Դրանք այժմ ուսումնասիրվում են աշխարհի առաջատար լաբորատորիաներում:

Քարանձավում հայտնաբերվել են նաև ճզմված խաղողի մնացորդներ և գինու բազմաթիվ կարասներ (մի ամբողջ գինու արտադրամաս): Հնարավոր է, որ դա ամբողջ աշխարհում գինու արտադրության ամենահին ցիկլն է: Այս հայտնագործությունը կհարստացնի նաև գինեգործության պատմությունը:

Վայոց ձորի քարանձավները կարող են դառնալ Հայաստանի տուրիստական ամենագրավիչ վայրերից մեկը:

### ***Հանքային ջրեր և աղբյուրներ***

Վայոց ձորի փոքրիկ տարածքում գետնից բխում են 150-ից ավելի հանքային տաք ու սառը աղբյուրներ: Յուրաքանչյուր գյուղ ունի իր հայտնի աղբյուրները, որոնց մոզական ուժ ու գորություն է վերագրվում: Դրանցից շատերի հետ կապված են առասպելական պատմություններ: Մակայն դրանցից ամենահայտնին, ուսումնասիրվածը և բուժիչը՝ Ջերմուկ՝ հանքային ջուրն է: Ջերմուկը ոչ միայն Վայոց ձորի, այլև Հայաստանի բոլոր ջրերի թագուհին է: Իր քիմիական և ֆիզիկական կազմով այն նման է Կարլովի Վարիի հայտնի հանքային ջրերին: Ջերմուկ բառը ծագել է հայերեն՝ ջերմ բառից, որ նշանակում է տաք: Այս ստորջրյա ջուրն օգտագործվում է խմելու, լողանալու և բազմաթիվ բուժիչ նպատակներով: Յուցված է մի շարք հիվանդությունների բուժման համար: Աղբյուրից այն բխում է +63 աստիճան ջերմությամբ: Միայն Ջերմուկ քաղաքի տարածքում բխում են 47 այդպիսի տաք աղբյուրներ:

## **6. Էկոտուրիզմ**

Էկոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի վայրի բնություն: Էկոտուրիզմի զարգացման համար Վայոց ձորն ունի ռեսուրսների բավական հարուստ պաշար և բնական ժառանգություն:

Այստեղ են գտնվում Հայաստանի հատուկ պահպանվող բնական տարածքներից չորսը, որտեղ պահպանվել է վայրի կենդանիների ու բույսերի զարմանալի կենսաբազմազանություն: Դրանք են Եղեգանձորի(Եղեգիսի ավազան), Հերիերի նոսրանտառային, Ջերմուկի անտառային և Ջերմուկի ջրաբանական տարածքները, որտեղ պահպանության ներքո են գտնվում հազվագյուտ կենդանիներ՝ հայկական մուֆլոն, բեզուարյան այծ, վարազ, հովազ, արջ, հազվագյուտ բույսեր՝ ծառակերպ գիհու նոսրանտառներ, տանձենու ռելիկտային այգի և եզակի հանքային ջրերի աղբյուրներ: Ջերմուկի, Գնդասարի և Նորավանքի տարածքները համարվում են նաև կարևոր թռչնաբանական տարածքներ, որտեղ ապրում և բնադրում են հազվագյուտ թռչուններ:

Այս տարածքները անտարբեր չեն կարող թողնել ոչ մի բնասեր զբոսաշրջիկի՝ տարվա ցանկացած եղանակի: Վաղ գարնանից մինչև ամառվա կեսերը ճամփորդները կտեսնեն վայրի ծաղիկների հսկայական տեսակներ՝ ձնշաղիկներ, մանուշակներ, գնարբուկներ, մեխակներ, խլոբրձներ, իրիսներ, ծաղկած մասրենիներ, իսկ ուշ ամռանն ու աշնանը նրանք կարող են ճաշակել վայրի հատապտուղներ՝ ցախակեռաս, մոշ, արոս, սգնի, գերիմաստի, վայրի տանձ, որոնք ունեն բազմաթիվ օգտակար հատկություններ: Տեղացիներին հետ նրանք կարող են հավաքել սունկ, վայրի բանջարներ, համեմունքներ, թեյաբույսեր, որոնք տեղական խոհանոցի անբաժանելի մասն են կազմում:

Զանազան թռչունները, միջատներն ու կենդանիները կուղեկցեն՝ նրանց իրենց ողջ ճանապարհորդության ընթացքում և կենդանի բնության հետ շփման մեծագույն հաճույքը կպատճառեն:

Վայոց ձորի Եղեգիսի կիրճում վերջերս կառուցվել է հարմարավետ տեսադիտարան, որտեղից նվազագույն հեռավորությամբ կարելի է դիտել բեզուարյան այծերի, վայրի խոզերի ու ոչխարների, որոնք ձագերի հետ ձորն են իջնում՝ ջուր խմելու:

Մեծ հայտանգործություններ են սպասվում նաև թռչնադիտման սիրահարներին. Նորավանքի կիրճում, որը համարվում է կարևոր թռչնաբանական տարածք, նրանք կարող են հանդիպել սև անգղի, մորուքավոր և սպիտակագլուխ անգերի, ներկարարի, բազեների ու բվեճների:

## Էկոտուրիզմը Վայոց ձորում

- վայրի բույսերի, թռչունների և կենդանիների դիտում
- բույսերի ու հատապտուղների դիտում /հավաքում/
- ակտիվ հանգիստ և զվարճանք բնության գողտրիկ անկյուններում խփված էկոճամբարում
- քայլարշավներ, լեռնամագլցում
- հեծանվային և մոտոարշավներ:



## 7. Ազրոտուրիզմի հնարավորություններ

Վայոց ձորի 44 համայնքներից 41-ը գյուղական են: Գյուղական բնակչությունը կազմում է մարզի ընդհանուր բնակչության ավելի քան 60%-ը: Գյուղացիներն այստեղ զբաղված են բազմազան գյուղատնտեսական գործունեությամբ՝ այգեգործություն, խաղողագործություն և գինեգործություն, անասնապահություն, մեղվաբուծություն, թռչնաբուծություն:

Վայոց ձորի գյուղերը փոխված են լեռնալանջերի մեղմաթեք սարավանդներին: Գեղեցիկ են դրանց ոչ միայն տեսքն ու շրջակա բնապատկերները, այլև անունները՝ Արենի, Արին, Արտավան, Գետափ, Գոմք, Բարձրունի, Արտաբույնք, Հերհեր, Զառիթափ, Զեղեա, Գնդեվազ, Ագարակաձոր, Աղավնաձոր, Ագատեկ, Խաչիկ, Եղեգիս, Մարտիրոս: Դրանք բոլորն էլ սուղված են այգիների մեջ՝ ծիրանի, դեղձի, խաղողի, խնձորի, տանձի, ընկույզի:

Մասնակցությունը վայոցձորյան բազմաթիվ մրգերի բերքահավաքին, որոնց շրջանը սկսվում է հունիս ամսից և վերջանում ուշ աշնանը, չտեսնված հաճելի պահեր կպարզնի արտասահմանցի զբոսաշրջիկներին:

Բացի այգեգործությունից, գյուղացիներն այստեղ զբաղվում են նաև անասնապահությամբ՝ տավարի, ոչխարի, այծի: Վայոց ձորը հայտնի է ոչ միայն իր չտեսնված գինիներով, այլև այդ գինիների համար անգուգական աղանդեր հանդիսացող պանիրներով՝ «Չանախի», «Եղեգնաձո», «Լոռ»: Վերջին տարիներին մեծ հռչակ են վայելում նաև Վայոց ձորում պատրաստվող այծի պանիրները, որոնք սպառողին են հասնում ինչպես կճուճում հորած, այնպես էլ ձիթապտղի յուղի մեջ պահածոյացված վիճակում: Այդ պանիրները Վայոց ձորից իսկական հուշանվերներ կարող են դառնալ:

Քաղաքներից ժամանած զբոսաշրջիկների վրա մեծ տպավորություն կթողեն սարից վերադարձող ոչխարների ու նրանց փնտրող ձագերի հանդիպման սրտառուչ տեսարանները, այծերի ուրախ ու անկարգ ցատկավազքը: Նրանց մեծ հաճույք կպատճառեն ձիով և մեծ զվարճանք՝ ավանակով զբոսանքները:

Զբոսաշրջիկները կարող են դիտել, թե ինչպես են տեղացիները կյանքում ոչխարներն ու կովերը, ինչպես են կաթից քամում սերը, ինչպես են պատրաստվում մածունն ու թթվասերը, տեղական համով պանիրները, ինչպես են պանիրները հորում կճուճում: Ի դեպ, պանիրը կճուճներում հողի մեջ հորելը տիպիկ վայոցձորյան ավանդույթ է: Յուրաքանչյուր զբոսաշրջիկ կարող է իր ձեռքով հողում պահ տալ իր անվանական կճուճը:

Վայոց ձորը հռչակված է նաև իր մեղրով: Այստեղ վաղ գարնանից մինչև ուշ աշուն տարբեր բարձրությունների վրա ծաղկում են 1650 տեսակի ծաղկավոր բույսեր, որոնց մեջ մեծ թիվ են կազմում դեղաբույսերը: Վայոց ձորի արևագույն մեղրը՝ քամված այդ բույսերի ծաղիկների նեկտարից, իր մեջ պահպանում է դրանց համը, բուրմունքը և բոլոր բուժիչ հատկությունները: Հայերի համար դարեր շարունակ մեղրը եղել է ոչ միայն սննդամթերք, այլև դեղ ու դարման:

Վայոց ձորի գյուղերի մեծ մասի ճանապահները բարվոք են, որոշները գազաֆիկացված են, ապահովված են կենցաղի բավարար պայմաններով: Ցանկացած գյուղում կան բարվոք բնակարաններ, որոնք կարող են ծառայել որպես **հյուրաստուն` B&B**, իսկ այն տները, որոնք պահպանել են հին կառուցվածքային ոճը, հին կահ-կարասի և դեկորատիվ-կիրառական իրեր, կարող են հանդիսանալ որպես յուրատեսակ երկրագիտական թանգարաններ:

Մի քանի գյուղերում կան ազգագրական երգի-պարի խմբեր, որոնք կարող են ազգային կոլորիտ հաղորդել գյուղական զբոսաշրջիկների առօրյային և ներգրավվել նրանց համար կազմակերպվող միջոցառումներում:

Վայոց ձորի բոլոր գյուղերում գործում են առաջնային բուժօգնության կետերը, հասանելի է ինտերնետ և բջջային կապը:

Իսկ ամենակարևորն այն է, որ Վայոց ձորի գյուղերի մարդիկ ունեն իրենց բնության նման մաքուր ու հրաշալի հողի, ազնիվ են ու բարի, առատաձեռն են ու հյուրասեր:

Ագրոտուրիզմը Վայոց ձորում

- տարբեր մրգերի բերքահավաք-տուրեր
- մեղր քամելու արարողություն
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- ձավար աղալու արարողություն
- կաթի վերամշակման և պանրի պատրաստման, կճուճներում պանրի հորման դիտում /մասնակցություն/
- ձիով, ավանակով զբոսանքներ
- շփում ընդհանի կենդանիների հետ` կով, ոչխար, այծ, հավ, հնդկահավ
- գինիների պատրաստում
- մրգային օղիների պատրաստում:

## ***8.      Գինու տուրիզմ***

Գինու տուրիզմն այսօր միջազգային տուրիզմի սիրված և ժամանակակից ձև է: Իսկ կարմիր գինու զարմանալի օգտակար հատկությունների մասին գիտնականներն ամեն օր նորանոր հայտնագործություններ են կատարում:

Վայոց ձորը Հայաստանի կարևորագույն գինեգործական շրջանն է, ինչը մեկ անգամ ևս ապացուցում են վերջին հնագիտական պեղումները: Այստեղ աճում է Արենի՝ էնդեմիկ տեսակի խաղող. դա յուրահատուկ համով սև խաղող է, որից ստացվում են անմահական անապակ կարմիր գինիներ` քաղցր, կիսաքաղցր, դառը: Արենի՝ խողողն ունի մի զարմանահրաշ հատկություն. նույնիսկ Հայաստանի այլ շրջաններում այս տեսակը չի տալիս իրեն բնորոշ այն համն ու բուրմունքը, որ ունի Վայոց ձորում: Այդ պատճառով էլ վայոցձորյան գինիներն անկրկնելի համ ունեն:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Գետափ, Մալիշկա, Ելփին, Ռինդ, Խաչիկ, Ջեղեա գյուղերը մասնագիտացված են խաղողագործության մեջ: Այդ գյուղերում յուրաքանչյուր ոչ գինեգործ է: Մարզում գործում են 9 գինու արտադրամասեր: Դրանք ունեն նաև համտեսի սրահներ, որտեղ զբոսաշրջիկները հնարավորություն ունեն համտեսելու բոլոր արտադրատեսակները: Այնպես որ, ունենալով գինեգործության հազարամյա ավանդույթներ, ճանաչված՝ Արենի՝ բրենդային գինի, Վայոց ձորը կարող է դառնալ գինու տուրիզմի կարևոր կենտրոն Հայաստանում և միջազգային գինու ճանապարհի մի հաճելի հանգրվան: Զբոսաշրջիկներն այստեղ կարող են մասնակցել գինու պատրաստման ողջ գործընթացին՝ խաղողի բերաքահավաք, տեղական ավանդական եղանակով գինու պատրաստում՝ ազգային երաժշտության ներքո ոտքերով խաղողի ճզմում, կրասների լցումում, և վերջապես, անմահական <<Արենի>> գինու համտես-վայելում:

Որպես հուշանվեր նրանք իրենց հետ կարող են տանել գինու իրենց նախընտրած տեսակը:

Վայոց ձորի բոլոր տուրիստական երթուղիները կարող են ընդգրկել գինու համտես:

### ***9. Որսորդական, ձկնորսական և արկածային տուրիզմ***

Դեռևս հնում Վայոց ձորը հայտնի էր որպես հրաշալի որսատեղի և հիմա էլ ունի այդ համբավը:

ՀՀ բնապահպանության նախարարությունը տարվա տարբեր եղանակների թույլատրում է որոշ կենդանիների և թռչունների որս /լոր, աղավնի, կտցար, արտույտ, սարյակ, կեռնեխ, ջրլող, թռչուններ, վայրի խոզ, նապաստակ, քարակաքավ, աղվես, կզաքիս, շնագայլ, գայլ/: Արփա և Եղեգիս գետերում ու դրանց վտակներում կարելի է ձկնորսական կարթով որսալ կարմրախայտ, բեղլու և կողակ:

Վայոց ձորի բնության նկատմամբ արդեն մեծ հետաքրքրասիրություն են դրսևորում նաև արկածային տուրիզմի սիրահարները՝ ժայռամագլցողները, պարապլանով թռիչքի սիրահարները, հեծանվորդներն ու բայթերները: Ձմռանն այստեղ կարելի է սահել դահուկներով ու մոտորասահնակներով:

### ***10. Ավանդական խոհանոց՝ խոհանոցային տուրիզմ***

Բազմաթիվ հարցումները ցույց են տվել, որ զբոսաշրջիկների մեծամասնությունը ճանապարհորդության ընթացքում կարևորում է համեղ ու յուրահատուկ սնունդը:

Վայոց ձորյան խոհանոցը՝ պահպանելով իր ընդհանուր հայկական դիմագիծը, այնուամենայնիվ ունի որոշ յուրահատկություններ: Այստեղ գյուղերում տարին բոլոր թխվում է ավանդական լավաշը, իսկ հացաթխման վերջին գնդերից պատրաստվում է <<Թափթա>>. Խմորագնդի մեջ անցք է բացվում, մի փոքր տափակեցվում է ու ամրացվում թոնրի պատին:

Գյուղի երեխաների սիրած ուտելիքն է թափթալից պատրաստված <<Մճուռը>>, <<Թափթա>> հացը տաք-տաք վիճակում մանրացնում են, վրան տնական հալած յուղ են ավելացնում, լավ խառնում և ուտում:

Թոնրի մեջ է թխվում նաև ավանդական գաթան՝ քաղցր և աղի խորիզներով, որը հարսանեկան և մյուս տոնական արարողությունների պարտադիր խորհրդանիշն է:

Վայոցձորցիները հմուտ պանրագործներ են. այստեղ բազմատեսակ պանիրներն են պատրաստում կովի, ոչխարի, այծի կաթից:

Վայոցձորյան խոհանոցում շատ հարգի են բանջարները՝ դրանք վայրի խոտաբույսեր են՝ ինամքով հավաքված տեղի կանանաց կողմից՝ ավելուկ, շեփ, սխտորուկ, կարշըմ, շուշան, մանդիկ, բոխի: Դրանցից մի մասից համեղ թթուներ են պատրաստվում, որոնք ամբողջ ձմեռ օգտագործվում են տեղական ճաշերի հետ, իսկ մյուս մասն էլ չորացվում ու պահվում է, և օգտագործվում տարբեր ճաշատեսակներ պատրաստելու համար: Բանջարներն օգտագործում են ինչպես տապակած վիճակում, այնպես էլ տարբեր ապուրների մեջ:

Վայոցձորցիների սիրած ճաշերից է <<Թթու բանջարը>>՝ պատրաստված սպիտակ բանջարից, սխտորուկից, մասուրի հյութից, պարունակում է նաև լոբի, ձավար, աղացած կարմիր բիբար, թանձրացվում է այլուրով: Շատ յուրահատուկ ճաշատեսակ է նաև <<Կարշըմը: Վերջինս չամանի հոտով բանջար է, որից պատրաստված ապուրի մեջ ավելացվում է նաև կաթ, այլուր, ոսպ, աղացած կարմիր բիբար և աղացած ընկույզ: Այս թանձր ապուրն ուտում են սխտորով՝ բրդելով չոր լավաշ:

Վայոց ձորում հարգված են եղել կաթով և մածնով ապուրները, ինչպես նաև մասուրով ապուրը: Դրանց մեջ հիմնականում օգտագործվում է ձավար ու ոսպ, վերջին ժամանակներս նաև բրինձ:

Տիպիկ ճաշատեսակներից է <<Քյալագյոշը>>՝ պատրաստված նախապես քամած ու չորացրած մածունից՝ չորթանից: Սա մածնի թանձր ոսպապուր է, որի վրա վերջում ավելացվում է դավլուրմայով սոխեռած: Այն նույնպես ուտում են՝ մեջը լավաշ բրդած:

Վայոցձորցիների դարավոր ավանդույթներից է <<Ղավուրմայի>> պատրաստումը. սա մսի պահածոյացման ավանդական, փորձված ու անվտանգ եղանակ է: Լավ եփած ոչխարի կամ տավարի միսը կարմրացվում է տնական յուղի կամ հենց ոչխարի յուղի մեջ, այնուհետև լցվում է կճուճների մեջ և ծածկվում յուղի հաստ շերտով: Ղավուրման գով մառանում կարելի է պահել ողջ ձմեռ: Դրանից հմուտ տանտիկիները ամբողջ ձմեռ զանազան տեղական ճաշեր են պատրաստում: Այն սիրված է նաև որպես սառը խորտիկ:

<<Ղավուրմայով շորվան>> Վայոց ձորի բրենդային ճաշատեսակներից է: Գյուղական որոշ ընտանիքներում ձմռանն այդ ճաշը պատրաստում են համարյա ամեն օր: Ղավուրմայից բացի այն պարունակում է սոխ, աղացած կարմիր բիբար, ձավար, տոմատի մածուկ, կարտոֆիլ,

շլորաչիր, մարգա (ծիրթուն): Որոշ գյուղերում դրա մեջ նաև կտրտած թթու կաղամբ են լցնում: <<Շորվան>> անպայման ուտում են թթու դրած բանջարեղենով և գլուխ սոխով՝ նախօրոք մեջը լավաշ բրդելով:

Սեպտեմբերյան <<Մուրբ խաչ>> արարողությունների ժամանակ պարտադիր է <<Ուլի խրովի>> պատրաստումը: Դրա համար ամբողջական ուլը համեմունքներով մշակելուց հետո իջեցնում են մարված թոնրի մեջ, տակը ջրով կաթսա են դնում, թոնիրը ծածկում մորթով և թողնում արողջ գիշեր:

Քանի որ Վայոց ձորը վաղուց հայտնի է որպես որսատեղի, այստեղ ավանդական են նաև որսի մտով պատրաստված ճաշատեսակները՝ նապաստակի քյուֆթան, կաքավի կամ աղունիկի մտով շորվան, տապակած լորը, ինչպես նաև Արփա և Եղեգիս գետերի ձկներից պատրաստված զանազան ճաշատեսակները:

Որպես թեյաբույսեր այստեղ դարեր ի վեր օգտագործվել են վայրի ուրցը, դադձը, անթառամը: Դրանք օգտագործվել են նաև որպես համեմունք տարբեր ճաշատեսակների համար: Սակայն վայոցձորյան համեմունքների <<Թագուհին>> մարզան է՝ ծիրթունը: Չնայած որ այն աճեցվում է բանջարանոցներում, սակայն դրա նախընտրելի տեսակը սարի մարզան է, որի պաշարները գյուղացիներն առատորեն հավաքում են սարերից և պահեստավորում: Մարզան օգտագործվում է վայոցձորյան համարյա բոլոր ճաշատեսակներում, իսկ այնպիսի տարածված ավանդական հայկական ճաշատեսակները, ինչպիսիք են տոլման, կոլոլակով քյուֆթան, խորովածը՝ մարգայի շնորհիվ այստեղ բոլորովին այլ համուհոտ են ստանում:

Վայոց ձորում դեռևս պահպանվել է ձմռան համար մթերքներ պաշարելու ավանդույթը: Դեռևս ամառվանից հմուտ ու եռանդուն կանայք սկսում են վայրի բանջար հավաքել ու չորացնել, մինչև աշուն զանազան մրգեր են չորացնում ու պահածոյացնում, պանիրն են հորում կճուճներում, աշնանը ընկույզներն ու հատապտուղներն են հավաքում, բանջարեղենի բոլոր տեսակներից թթու են դնում տակառներում, տղամարդիկ էլ մեղրն են քամում, գինին ու մրգային օղիներն են պատրաստում...

Ուշ աշնանն արդեն պատրաստվում է ավանդական <<Ղավուրման>>:

Ձմեռնամուտին Վայոց ձորի գյուղացիների մառանը մի գունավոր և հոտավետ պահեստարան է. մի կատարյալ տեսարժան վայր՝ դարակներում շարված գույնզգույն մրգերով ու բանջարեղեններով, պատերի տակ շարված մեղրի, պանրի, դավուրմայի, թթուների կճուճներով, խաղողի ու տանձի կախաններով, բանջարների, չրերի ու չորացրած հատապտուղների տոպրակներով: Եթե այս ամենին գումարենք նաև լավաշի դարսերը, գինու կարասներն ու օղու տարաները, ապա այս համտեսի սրահից պարզապես դժվար է դուրս գալ:

## **11. Առողջարանային տուրիզմ**

Վայոց ձորը նպաստավոր տարածաշրջան է ոչ միայն մշակութային, էկո, ագրո, գինու, արկածային, այլև առողջարանային տուրիզմի համար: Այստեղ է գտնվում միջազգային հռչակ ունեցող Ջերմուկ առողջարանային քաղաքը:

Ջերմուկ հանքային ջրի կենսարար ու առողջարար հատկությունները մարդու վրա իրենց դրական ազդեցությունն ապացուցել են դարերի ընթացքում:

Պատմական Ջերմուկը կառուցվել է դեռևս Արշակունյաց տիրապետության օրոք (մ.թ.1դ.), այն եղել է Սյունյաց թագավորների և Օրբելյան իշխանատան ամառանոց-բուժավայրը:

Ջերմուկը գտնվում է ծովի մակերևույթից 2080մ բարձրության վրա, Արփա գետի ակունքների մոտ, մի ընդարձակ սարահարթի վրա: Արփա գետը՝ իր հիասքանչ կիրճով քաղաքը բաժանում է 2 մասի:

Շնորհիվ օգտակար բաղադրություն ունեցող բուժիչ հանքային տաք ջրերի՝ Ջերմուկը դարձել է մարդկանց առողջության վերականգնման հանրահռչակ կենտրոն: Այստեղ բուժվում են աղեստամոքսային համակարգի /ստամոքսաբորբեր, ստամոքսի և 12-մատնյա աղիի խոց, կոլիտներ, էստերոկոլիտներ/, լյարդի, լեղապարկի, լեղուղիների և ենթաստամոքսային գեղձի, հենաշարժական ապարատի, գինեկոլոգիական, պերիֆերիկ նյարդային համակարգի, նյութափոխանակային հիվանդություններ՝ շաքարային դիաբետ, պոդագրա: Բուժման մինիմալ կուրսը կարելի է կազմակերպել 12 օրում, իսկ լրիվ ծավալով բուժական կուրսը՝ 18 օրում:

Քաղաքում գործում են մի շարք առողջարաններ, որոնք բարձրակարգ հանգստի ու բուժման հնարավորություններ են առաջարկում այցելուներին: Իսկ ռեստորանները հիացնում են հազվագույտ համեղ ուտեստերով, անհրաժեշտության դեպքում առաջարկելով նաև դիետիկ ճաշացանկ (մենյու):

Քաղաքում ընթանում է նաև նոր հյուրանոցների շինարարություն:

Ջերմուկում բուժիչ են ոչ միայն հանքային ջրերը, այլև ծառերի ու ծաղիկների բուրմունքներով հագեցած օդը, լեռնային արևը, աչք շոյող տեսարաններն ու անաղմուկ միջավայրը. լռությունն այստեղ ընդհատում են միայն առվակների քչքչոցն ու թռչունների երգերը...

Ջերմուկը հրաշալի է տարվա բոլոր եղանակներին, այստեղ գարունը ողողված է ծաղիկների առատությամբ, նույնիսկ չոր ժայռերից կախված են վայրի ծաղիկների հսկա ծաղկեփնջերը, ամառը զով է ու կանաչ, աշնանն այստեղ գույների մի իսկական հրավառություն է. քաղաքը շրջապատող անտառածածկ լեռներն իրենց անհավանական գույներով ավելի շատ վիրտուալ են թվում, քան իրական, իսկ ջերմուկյան ձմեռն իսկական դրախտավայր է ձմեռային հեքիաթների երկրպագուների և ձմեռային արկածների սիրահարների համար: Չնայած մինչև

2 մ հասնող ձյան ծածկույթին, ձմեռն այստեղ լուսավոր է և տաք: Վերջին տարիներին կառուցված ճոպանուղին ձմեռային հանգստի ու ժամանցի հիանալի հնարավորություն է ստեղծում, իսկ ամռանը նույն ճոպանուղին կօգնի էկոտուրիստներին արագ հայտնվելու լեռնային մարգագետինների միջավայրում:

Վերջին տարիներին Ջերմուկը ներգրավված է միջազգային մարզական և մշակութային ծրագրերում. այստեղ տեղի են ունենում միջազգային աշխատաժողովներ, շախմատի միջազգային մրցաշարեր, քանդակի սիմպոզիումներ, երիտասարդական ճամբարներ, իսկ 2010թ-ից ավանդական կղառնան նաև Երաժիշտներ առանց սահմանների՝ միջազգային ռոք փառատոնը և Բայք փառատոնը:

## **12. Տոներ**

Վայոցձորցիները սիրում են նշել ազգային ավանդական ու հոգևոր տոները. որոշ գյուղերում Ամանորի, Ջատկի, Տեառնընդառաջի, Վարդավառի տոները նշում են ամբողջ գյուղով՝ պահպանելով ավանդական ծիսակարգը:

Վայոցձորցիների ամենայուրահատուկ ու սիրելի տոնը Բերքի տոնն է: Այն տեղի է ունենում ամեն տարի՝ սովորաբար հոկտեմբերի երկրորդ կիրակի օրը, մարզկենտրոն Եղեգնաձորում: Տոնին մասնակցում են մարզի բոլոր գյուղերի ու քաղաքների բնակիչները: Յուրաքանչյուր գյուղ տոնական շքերթի է դուրս գալիս իրեն բնորոշ բարիքներով, տեղական հաստապտուղներով ու բույսերով զարդարված մեքենաներով: Գյուղացիները ցուցադրում են նաև թատերականացված պատկերներ գյուղի կենցաղից ու ազգային խոհանոցի խորտիկների պատրաստումից: Ամֆիթատրոնում տարբեր համայնքների մշակութային խմբերը ներկայացնում են տոնական համերգային ծրագիր, իսկ հրապարակի շուրջը յուրաքանչյուր գյուղի ներկայացուցիչներ առանձին տաղավար-սեղանիկների շարքով ներկայացնում են իրենց գյուղերի համեղ բարիքները՝ առատորեն հյուրասիրելով բոլոր այցելուներին:

Վայոց ձորում արդեն ավանդական է դարձել նաև Գինու տոնը՝ Այն սովորաբար նշվում է դարձյալ հոկտեմբերին՝ Արենի գյուղում: Արենին Հայաստանի ու Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է: Հնագետները վերջին հայտնագործությունները փաստում են, որ գինեգործությունն այստեղ ունի հազարամյա պատմություն: Գյուղն անմիջապես գտնվում է Երևան-Ստեփանակերտ, Հայաստան-Իրան մայուղու վրա, հեռավորությունը Երևանից՝ 100կմ: Այն հայտնի է իր հանրահռչակ Դրենի՝ գինիներով, որոնք ստացվում են նույնանուն խաղողից: Արենցիները աշխատասեր և ուրախ մարդիկ են:

Գինու տոնը սովորաբար սկսվում է հենց գյուղի մուտքից, որտեղից աղ ու հացով դիմավորում են հյուրերին: Օղակաձև հրապարակում գինեգործների տաղավարներն են, որտեղ ներկայացված է նրանց ողջ տեսականին: Գինին հոսում է առատորեն և տոնի մասնակիցներն այն անվճար համտեսելու հնարավորություն ունեն:

Գյուղի բոլոր փողոցներում դրվում են սեղանիկներ՝ ավանդական հայկական և վայոցձորյան բարիքներով՝ բազմազան մրգեր, հյութեր, գաթաներ... Առանձին տներում հյուրերը կարող են մասնակցել լավաշ ու գաթա թխելու արարողությունների ու համտեսել դրանք թարմ վիճակում:

Գյուղի կենտրոնում դրված մեծ ավազանի մեջ աղջիկները ոտքերով ճմռում են խաղողը, որից ստացվում է անմահական գինին: Ցանկության դեպքում հյուրերը ևս կարող են մասնակցել այդ ուրախ և կարևոր արարողությանը:

Ամենուրեք հնչում է ազգային երգն ու պարը, տեղի են ունենում ձիավարության մրցույթներ, թատերականացված ծիսական արարողություններ, խաղեր: Հրապարակում հնչում են ավանդական կենացներ, ու լավագույն կենաց ասողներն արժանանում են մրցանակի: Տոնը շարունակվում է մինչև ուշ գիշեր:

### **Գյուղեր\***

Վայոց ձորի բոլոր գյուղերն էլ հրապուրիչ են ագրոտուրիզմի, էկոտուրիզմի, արկածային, գինու և տուրիզմի այլընտրանքային այլ ձևերի տեսանկյունից: Սակայն ստորև ներկայացվում են միայն 5 համայնքների համառոտ տուրիստական բնութագրերը, որոնք հանդիսանում են <<Հարավային Հայաստանի գյուղական համայնքների կենսապահովման զարգացում>> ծրագրի շահառուներ:

## **Հերիեր**

Հերիեր գյուղը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից մեկն է: Այն պտղատու այգիների մեջ թաղված մի սքանչելի գյուղ է՝ հենված Վայոց սարին, որը հանգած հրաբխային սար է՝ 2581 մ բարձրությամբ: Այստեղից երևում է ողջ Վայոց ձորը: Վայոց սարը համարվում է Կովկասի ամենագեղեցիկ հանգած հրաբուխը: Լավային ամենաերկար հոսքը 16կմ-ով ձգվում է Կարմրաշեն գյուղից մինչև Արփա գետի հունը: Հենց Վայոց սարի ժայթքած հրաբխի պատճառով է 735թ-ին կործանվել ծաղկուն Մոզ քաղաքը:

Գյուղը գտնվում է Վայքից 18կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակարդակից՝ 1600 մ:

Հերիերը շրջապատված է գիհու նոսրանտառներով: Այս գյուղը զարմացնում է պատմական և բնական հուշարձանների առատությամբ: Գյուղն ունի մի քանի նշանավոր միջնադարյան եկեղեցիներ և ամրոցներ, որոնց շուրջը տարածված են հարյուրավոր խաչքարեր (Մբ. Միոն և Մբ. Գևորգ եկեղեցիներ, Կապույտ բերդ):



Արփայի վտակ Հերիեր գետակը ստեղծում է մի քանի հիասքանչ ջրվեժներ, որոնք համարվում են բնական հուշարձաններ: Գյուղին մեծ շուք է տալիս նաև լեռների մեջ սեղմված արհեստական ջրամբարը, որը ևս ունի մեծ տուրիստական պոտենցիալ:

### ***Էկոտուրիզմ***

- արշավ ոտքով դեպի բնության և պատմության հուշարձաններ
- հեծանվային արշավներ
- ձիով արշավներ
- Էկոճամբարի հնարավորություն Հերիեր գետակի ափերին, ջրվեժների մոտ
- թռչունների դիտում
- կենդանիների դիտում
- վայրի հատապտուղներ (տանձենի, մասրենի, սզնի, ալոճենի)
- սունկ, վայրի բանջարներ, թեյաբույսեր, համեմունքներ:

### ***Ագրոտուրիզմ***

- մոռի, խնձորի, սալորի, ընկույզի բերաքահավաք-տուրեր
- մեղրաքամ
- պանիրների, այլ կաթնամթերքի պատրաստում, պանրի հորում կճուճներում
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- բանջարեղեններից թթվի պատրաստում
- ձավար աղալ
- տնական չրերի պատրաստում
- գյուղատնտեսական կենդանիների (կով, այծ, ոչխար, հավ) դիտում
- տեղական արհեստների դիտում (ասեղնագործություն, գորգագործություն)
- տեղական համեղ ճաշատեսակների պատրաստում և համտեսում:

### ***Արկածային տուրիզմ***

- որսորդություն
- ձկնորսություն
- թռիչք պարապլանով
- ժայռամագլցում
- մոտորանավակով զբոսանք արհեստական լճում:

## Ազատեկ

Մարզկենտրոնից հեռու է 23, իսկ Վայքից՝ 7 կմ: Հետաքրքիր է Վայք-Ազատեկ ոլորապտույտ ճանապարհը, որն ըստ բազմափորձ ճանապարհորդների, հիշեցնում է Շվեյցարիան: Գեղեցիկ գյուղ է՝ շուրջ բոլորը լեռնաշղթաների վեհ ու հիասքանչ տեսարաններով: Պատմական հուշարձաններից նշանավոր է ք.ա. 1-ին հազարամյակի ամրոցը, միջնադարյան գերեզմանատեղին և 17-րդ դարում. կառուցված եկեղեցին: Բնության հուշարձաններից գրանցված է Ազատեկի բրածո ֆլորան:

### *Էկոտուրիզմ*

- արշավ ոտքով դեպի բնության և պատմության հուշարձաններ
- հեծանվային արշավներ
- ձիով արշավներ
- թռչունների դիտում
- կենդանիների դիտում
- վայրի բույսերի դիտում
- վայրի հատապտուղներ (տանձենի. մասրենի, սզնի, ալոճենի, գերիմաստի)
- վայրի բանջարներ, թեյաբույսեր, համեմունքներ:

### *Ագրոտուրիզմ*

ծիրանի, խնձորի, տանձի, ընկույզի բերաքահավաք-տուրեր

- մեղրաքամ
- պանիրների, այլ կաթնամթերքի պատրաստում, պանրի հորում կճուճներում
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- բանջարեղեններից թթվի պատրաստում
- մրգային օղիների պատրաստում (ծիրան, սև սալոր, տանձ, խնձոր)
- ձավար աղալ
- տնական չրերի պատրաստում
- գյուղատնտեսական կենդանիների (կով, այծ, ոչխար, հավ) դիտում
- տեղական համեղ ճաշատեսակների պատրաստում և համտեսում
- տեղական թանգարան:

### *Արկածային տուրիզմ*

- որսորդություն
- ձմեռային դահուկասահք:

## **Զատիթափ**

Վայոց ձորի մարզի խոշոր գյուղերից է, Վայքի շրջանի նախկին շրջկենտրոնը: Վայքից հեռու է 10կմ: Գյուղի միջով հոսում է Փշոնք գետակը: Գյուղն ամբողջովին թաղված է այգիների մեջ: Հատկապես հայտնի է իր ընկույզով և մեղրով: Պատմական հուշարձանները բուն գյուղի ներսում շատ չեն, սակայն մի քանի կմ-ի վրա գտնվում են նշանավոր պատմական հուշարձաններ՝ Մարտիրոսի վիմափոր եկեղեցին /13-րդ դար/, Գոմքի մատուռ-հուշարձանը /14-րդ դար/, և Ժայռերի վրա քանդակված միջնդարյան խաչքարերի շարքը: Բնության հուշարձաններից ուշագրավ են Գոմքի և Մարտիրոսի բնական լճակները:

### ***Էկոտուրիզմ***

- արշավ ոտքով դեպի բնության և պատմության հուշարձաններ
- հեծանվային արշավներ
- ձիով արշավներ
- թռչունների դիտում
- կենդանիների դիտում
- վայրի հատապտուղներ (տանձենի, մասրենի, սզնի, ալոճենի, գերիմաստի)
- վայրի բանջարներ, թեյաբույսեր, համեմունքներ:
- պանիրների, այլ կաթնամթերքի պատրաստում, պանրի հորում կճուճներում
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- բանջարեղեններից թթվի պատրաստում
- մրգային օղիների պատրաստում (սև սալոր, տանձ, խնձոր)
- ձավար աղալ
- տնական չրերի պատրաստում
- գյուղատնտեսական կենդանիների (կով, այծ, ոչխար, հավ, հնդկահավ) դիտում
- տեղական համեղ ճաշատեսակների պատրաստում և համտեսում:

### ***Արկածային տուրիզմ***

- որսորդություն
- ձմեռային դահուկասահք:
- 

## **Գնդեվազ**

Գնդեվազը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից մեկն է: Գտնվում է դեպի Ջերմուկ տանող ճանապարհի ձախ կողմում՝ լեռնային սարահարթի վրա՝ ծովի մակարդակից մոտ 1900մ բարձրությամբ: Գնդեվազը երեք կողմից շրջապատված է գեղեցիկ անտառներով ու բարձր սարերով, իսկ մի կողմից՝ դեպի Արփա գետը տանող խորը ձորակով:

Հենց այդ գողտրիկ ձորակում է գտնվում նշանավոր Գնդեվանք եկեղեցին, որը կառուցվել է Սյունիքի Սոֆիա իշխանուհու կողմից և օծվել 936 թ-ին: Գյուղը հարուստ է նաև բնության հուշարձաններով. Պահակային աշտարակ, Բերդի գլուխ Ժայռերը, Սատանայի աշտարակ բազալտները:

Գնդեվազը հայտնի է իր մեղրով և ծիրանով, որն այստեղ հավաքում են այն ժամանակ, երբ ամբողջ Հայաստանում ծիրանի բերքահավաքն արդեն ավարտված է լինում:

Գնդեվազը Ջերմուկից հեռու է ընդամենը 12 կմ, ինչը մշակութային տուրիզմի, ագրոտուրիզմի, էկոտուրիզմի և առողջարանային տուրիզմի համակցման հիանալի հնարավորություն է ընձեռում:

### ***Էկոտուրիզմ***

- արշավ ոտքով դեպի բնության և պատմության հուշարձաններ
- հեծանվային արշավներ
- ձիով արշավներ
- թռչունների դիտում
- կենդանիների դիտում
- վայրի բանջարներ, թեյաբույսեր, համեմունքներ
- էկոճամբար Գնդեվանքի ձորում:

### ***Ագրոտուրիզմ***

- ծիրանի բերքահավաք
- մեղրաքամ
- պանիրների, այլ կաթնամթերքի պատրաստում, պանրի հորում կճուճներում
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- բանջարեղեններից թթվի պատրաստում
- ձավար աղալ
- տնական չրերի պատրաստում
- գյուղատնտեսական կենդանիների (կով, այծ, ոչխար, հավ, հնդկահավ) դիտում
- այցելություն տեղական ձկների ձկնաբուծարան (Կարմրախայտ, Իշխան)
- տեղական համեղ ճաշատեսակների պատրաստում և համտեսում:

### ***Արկածային տուրիզմ***

- ժայռամագլցում
- որսորդություն
- ձկնորսություն Արփա գետում
- մոտորասահնակ
- դահուկավազք:

## Արտավան

Գտնվում է ծովի մակերեկույթից 1900 մ բարձրության վրա, հեռավորությունը Եղեգնաձորից՝ 38 կմ, Վայքից՝ 21 կմ:

Արտավանը Վայոց ձորի այն եզակի գյուղերից է, որի տարածքը հարուստ է անտառներով: Շնորհիվ այդ անտառների, Արտավան գետի հիասքանչ ձորակի և հարուստ բուսական և կենդանական աշխարհի՝ այս գյուղը չտեսնված վայր է էկոտուրիզմի սիրահարների համար: Պատմական հուշարձաններից ուշագրավ է հին գյուղատեղին: Այս գյուղն ավելի գրավիչ է իր հարուստ բնությամբ և բնության հուշարձաններով, որոնցից ուշագրավ է 2100 մ բարձրության վրա գտնվող <<Հայելի>> լճակը: Ամռանն այստեղ կլիման գովաշունչ է ու մեղմ:

### *Էկոտուրիզմ*

- արշավ ոտքով դեպի բնության և պատմության հուշարձաններ
- հեծանվային արշավներ
- ձիով արշավներ
- թռչունների դիտում
- կենդանիների դիտում
- յուրահատուկ բուսականության դիտում
- վայրի հատապտուղներ (տանձենի, մասրենի, սգնի, ալոճենի)
- անտառային սնկեր, վայրի բանջարներ, թեյաբույսեր, համեմունքներ
- Էկոճամբար Արտավան գետի ձորում:

### *Ագրոտուրիզմ*

- խնձորի, տանձի բերաքահավաք
- մեղրաքամ
- պանիրների, այլ կաթնամթերքի պատրաստում, պանրի հորում կճուճներում
- լավաշ ու գաթա թխելու արարողություն
- բանջարեղեններից թթվի պատրաստում
- ձավար աղալ
- տնական չրերի պատրաստում
- գյուղատնտեսական կենդանիների (կով, այծ, ոչխար, հավ, հնդկահավ) դիտում
- տեղական համեղ ճաշատեսակների պատրաստում և համտեսում:

### *Արկածային տուրիզմ*

- որսորդություն
- ձկնորսություն
- լեռնադահուկասահք:

*Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի օրացույց / Վայոց ձոր /*

Տուրիզմի կամ զբաղմունքի տեսակ	Ժամկետը	վայրը
Դահուկասահք, ձմեռային սպորտաձևեր, ճոպանուղի	նոյեմբեր-մարտ	ք. Ջերմուկ
Դահուկասահք լեռներում	նոյեմբեր-մարտ	Լվիսի դաշտեր /Բարձրունի, Մերս, Մարտիրոս, Խնձորուտ գյուղերի մոտակայքում/
Ձմռան տոն	փետրվար	ք. Ջերմուկ, Լվիսի դաշտեր
Տեառնընդառաջի արարողություն	փետրվար	Արենի, մարզի տարբեր գյուղական համայնքներ
Արշավ լեռներում (ձնձաղիկների, մանուշակների, թռչունների դիտում)	մարտ-ապրիլ	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Ուխտագնացություն դեպի Նորավանք	ապրիլ	Արենի-Նորավանք
Վայրի կենդանիների դիտում	շուրջ տարի	գ. Շատին, կենդանիներ տեսադիտարան
Այցելություն հրեական գերեզմանոց	մայիսի 11	գ. Եղեգիս
Քայլարշավներ լեռներում (սունկի, վայրի բանջարների, դեղաբույսերի, վայրի ծաղիկների, վարդակակաչների հավաքում, խոլորձներ, գնարբուկներ, ծաղկած մասրենի) և թռչունների դիտում	մայիս-հունիս	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Թուֆ թափ տալու արարողություն, թթի օղու պատրաստում	հունիս	Եղեգնաձոր, Վայք քաղաքներ, մարզի գյուղական համայնքներ
Ուխտագնացություն դեպի Սպիտակավոր	հունիսի 17	Եղեգնաձոր-Վերնաշեն-Գլաձոր
Մասնակցություն ծիրանի բերքահավաքի, ծիրանի օղու, ծիրանաչրերի ու ծիրանահյութի պատրաստում	հունիս-հուլիս	Վայք քաղաք, մարզի տարբեր գյուղական համայնքներ
Վարդավառի տոնակատարություն	հուլիս	Եղեգնաձոր, Ջերմուկ և տարբեր գյուղական համայնքներ
Հեծանվային արշավներ	մայիս-հոկտեմբեր	մշակված երթուղիներով, մարզի տարբեր տարածքներում
Շախմատի միջազգային առաջնություններ	հետևել շախմատի մրցաշարերի ժամանակացույցին	Ջերմուկ

Վրանային էկոճամբարներ	հունիս-հոկտեմբեր	Ջերմուկի հին ճանապարհ, Նորավանքի ձոր, Եղեգիսի ձոր, Վայքի ավազներ՝ անտառ, մարզի տարբեր գյուղական համայնքներ
Ձիավարություն	մայիս-հոկտեմբեր	գյուղական համայնքներ
Մասնակցություն մոռի բերքահավաքի, մոռից տնային պահածոների պատրաստում	հուլիս	գ. Հերհեր
Մասնակցություն մեղր քամելու արարողության, մեղրի համտես	օգոստոս	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն ձավար աղալու արարողության	օգոստոս	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն կճուճներում պանրի հորման արարողության	հունիս-օգոստոս	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն լավաշի, թափթայի, գաթայի թխման արարողության	ողջ տարվա ընթացքում	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Միջազգային «Բայք-Ֆեստ» և Բայք ճամբար	սեպտեմբեր	Ջերմուկ
<<Music without borders>> միջազգային ոռք փառատոն	սեպտեմբեր	Ջերմուկ
Հայկական կիթառ միջազգային երաժշտական փառատոն	սեպտեմբեր	Ջերմուկ
Մասնակցություն ընկույզի բերքահավաքի	սեպտեմբեր	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն խաղողի բերքահավաքի, գինու պատրաստման արարողության	սեպտեմբեր-հոկտեմբեր	Արենի, Աղավնաձոր, Ելփին, Գետափ, Ռինդ
Մասնակցություն տանձի և խնձորի բերքահավաքի	սեպտեմբեր-հոկտեմբեր	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Գինու փառատոն	հոկտեմբեր	Արենի, Ռինդ, Ելփին, Մալիշկա
Բերքի տոն	հոկտեմբեր	Եղեգնաձոր
Մասնակցություն մրգային/խնձորի, տանձի, սև սալորի, շլորի, դեղձի/ և մեղրի օղիների պատրաստման արարողությունների	հոկտեմբեր-նոյեմբեր	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն <<Ղավուրմայի>> պատրաստման արարողության	նոյեմբեր-դեկտեմբեր	Մարզի տարբեր գյուղական համայնքներ
Մասնակցություն <<Վայոցձորյան համով Նոր տարի>> արարողություններին	դեկտեմբեր-հունվար	Մարզի քաղաքային և գյուղական համայնքներ